

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2008 ԹՎԱԿԱՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի (այսուհետև՝ Բանկ) Խորհրդի հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:



Բանկի Խորհրդի անդամներ.

Բարսեղ Բեգլարյան	Խորհրդի նախագահ		30.04.09.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Էնդել Ստեփանյան	Խորհրդի անդամ		30.04.09.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մանուկ Մկրտչյան	Խորհրդի անդամ		30.04.09.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վահրամ Ղազարյան	Խորհրդի անդամ		30.04.09.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Մանվել-Ջոն Վարթանյան	Խորհրդի անդամ		30.04.09.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի (այսուհետև՝ Բանկ) Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Բանկի Վարչության անդամներ.

Ստորագրողի Անուն, ազգանուն	Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն		30.04.09 _{թ.}
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստորագրողի Անուն, ազգանուն	Վարչության նախագահի տեղակալ, Գործադիր տնօրենի առաջին տեղակալ		30.04.09 _{թ.}
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստորագրողի Անուն, ազգանուն	Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ		30.04.09 _{թ.}
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստորագրողի Անուն, ազգանուն	Վարչության անդամ, Ռազմավարության և մեթոդաբանական վարչության պետ		30.04.09 _{թ.}
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստորագրողի Անուն, ազգանուն	Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ		30.04.09 _{թ.}
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

ՈՐՊԵՍ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կառավարման մարմինների 2008 թվականի գործունեության տարեկան սույն զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնեսի արդյունքերի և զարգացման իրական պատկերի նկարագիրը,
- կարևոր դեպքերի նկարագիրը,
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը:

Ֆինանսական արդյունքներ

29,632.2 մլն. ՀՀ դրամ

2008 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ընդհանուր ակտիվները կազմել են 29,632.2 մլն. ՀՀ դրամ, որը 2007թ. համեմատ աճել է 19.3 %-ով

12,189.6 մլն. ՀՀ դրամ

2008 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ վարկային պորտֆելը կազմել է 12,189.6 մլն. ՀՀ դրամ, որը 2007թ. համեմատ աճել է 32.9 %-ով

580.8 մլն. ՀՀ դրամ (mln AMD)

2008 թվականի արդյունքներով ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ շահույթը կազմել է 580,8 մլն դրամ, որը 2007թ. համեմատ աճել է 74.7 %-ով

12,142.5 մլն. ՀՀ դրամ

2008 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ հաճախորդներից ներգրավված միջոցները կազմել են 12,142.5 մլն. ՀՀ դրամ, որը 2007թ. համեմատ աճել է 3.8 %-ով

7,544.6 մլն. ՀՀ դրամ

2008 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ընդհանուր կապիտալը կազմել է 7,544.6 մլն. ՀՀ դրամ, որը 2007թ. համեմատ աճել է 69 %-ով

5,362.0 մլն. ՀՀ դրամ

2008 թվականի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ կանոնադրական կապիտալը կազմել է 5,362.0 մլն. ՀՀ դրամ, որը 2007թ. համեմատ աճել է 47.3 %-ով

Ակտիվներ

Հաշվետու ֆինանսական տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի ակտիվներն աճել են 4,800,327 հազ. ՀՀ դրամով, կամ 19.3%-ով՝ կազմելով 29,632,267 հազ. ՀՀ դրամ: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ 2008 թվականի ակտիվների աճի նախատեսված ցուցանիշի վրա 3-րդ եռամսյակից սկսած բացասական ազդեցություն ունեցավ ՀՀ տնտեսության մեջ գործարար ակտիվության մակարդակի որոշակի նվազումը՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցություններով:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ 2006 թվականի համեմատ, Բանկի ակտիվների աճը կազմել է 22,489,324 հազ. ՀՀ դրամ, կամ 4 անգամ:

Հաշվետու տարում Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է եղել կանխիկ դրամական միջոցների և ՀՀ կենտրոնական բանկում հաշվի մնացորդների 6,031,910 հազ. ՀՀ դրամ կամ 2.34 անգամ և վարկային պորտֆելի 3,020,704 հազ. ՀՀ դրամ կամ 32.9% աճով: Միաժամանակ, նախորդ տարվա համեմատ 1,064,947 հազ. ՀՀ դրամով կամ 5.7%-ով նվազել են Բանկի եկամտաբեր ակտիվները, ինչը հետևանք էր պետական արժեթղթերում կատարված ներդրումների և այլ բանկերի հանդեպ պահանջների նվազմանը:

Վարկեր

2006 թվականի համեմատ, հաշվետու տարում վարկային պորտֆելն աճել է 9,676,824 հազ. ՀՀ դրամով, կամ շուրջ 4 անգամ, իսկ 2007 թվականի համեմատ՝ 3,020,704 հազ. ՀՀ դրամով, կամ 32.9%-ով:

2008թ. Բանկի կողմից տրամադրված վարկերի աճը պայմանավորված է տարվա ընթացքում միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորման ակտիվ գործընթացով, մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ, վարկային ծրագրերում մասնաճյուղերի ներգրավմամբ ու վարկավորման տարածքաշրջանային կենտրոնների ձևավորմամբ:

2008 թվականի ընթացքում տրամադրվել է 21,690,718 հազ. ՀՀ դրամի վարկեր, որը գերազանցում է 2007 թվականի (16,930,604 հազ. ՀՀ դրամ) ցուցանիշը 4,760,114 հազ. ՀՀ դրամով:

Վարկավորման ոլորտում Բանկի ռազմավարությանը համապատասխան, միկրո և փոքր վարկերի տրամադրման գործառույթների ուժեղացման արդյունքում վարկավորման ծավալների աճին զուգահեռ 2008 թվականի ընթացքում լուծվեց նաև վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի, կենտրոնացումների նվազեցման խնդիրը:

Վարկավորման գործընթացի բարձր արդյունավետությունը պահպանելու նպատակով Բանկը 2008թ. շարունակեց ուժեղացնել վարկերի մոնիտորինգի գործառույթը: Այս նպատակով բանկի կառուցվածքում ձևավորվեց նոր առանձնացված ստորաբաժանում՝ Վարկերի մոնիտորինգի խումբ:

Հարկ է նշել, որ Բանկի տրամադրած վարկերը սպասարկվում են պայմանագրերին համապատասխան և գերակշռող մասը դասակարգված են որպես ստանդարտ վարկեր: Այս ցուցանիշը վկայում է վարկային ռիսկի կառավարման բարձր

մակարդակի մասին:

Միջազգային վարկային ծրագրեր

2008 թվականին Բանկը շարունակեց ակտիվ գործունեությունն ծավալել միջազգային ծրագրերով վարկավորման բնագավառում:

Կարևորելով վարկային տեխնոլոգիաների կատարելագործումը, Բանկը Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի (EBRD) հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում վարկավորման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով հաշվետու տարվա ընթացքում կազմակերպեց մի շարք վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ՝ համապատասխան վարկային մասնագետներ ներգրավելու համար:

Արդյունքում Բանկում ձևավորվեց բարձրորակ և ժամանակակից գիտելիքներ ունեցող մասնաճյուղերի կառավարիչների և վարկային մասնագետների համապատասխան խումբ, որոնք ընդգրկված են նաև ՀՀ տարածաշրջաններում վարկավորում իրականացնելու նպատակով ստեղծված տարածաշրջանային վարկային կենտրոնների կազմում: Միաժամանակ ներդրվել են համաշխարհային լավագույն փորձին համապատասխանող վարկավորման տեխնոլոգիաներ, որոնց օգնությամբ Բանկում որակապես նոր մակարդակի բարձրացվեց վարկավորման գործընթացը:

Տարվա ընթացքում ակտիվորեն շարունակվել է Բանկի համագործակցությունը գերմանական KfW բանկի հետ «Հիփոթեքային շուկայի կայուն զարգացում» ծրագրի շրջանակներում: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 627,460 հազ. դրամ:

Հարկ է նշել, որ 2008թ. տարեվերջին իրականացված ընտրության արդյունքում Բանկը ընգրկվեց ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող Գերմանա-Հայկական հիմնադրամի մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրական զարգացում» վարկային ծրագրի մասնակիցների ցանկում: Վերը նշվածը հնարավորություն կտա Բանկին զգալիորեն ընդլայնել վարկավորման գործընթացը հատկապես ՀՀ շրջաններում՝ 2009 թ. ընթացքում ավելացնելով վարկավորման կենտրոնների քանակը: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 300,000 հազ. դրամ:

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է Բանկի համագործակցությունը նաև շվեյցարական Իզմիրլյան Հիմնադրամի հետ: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 412,647 հազ. դրամ:

Արժեթղթեր

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է ակտիվ գործունեությունն ծավալել պետական արժեթղթերի շուկայում: Սակայն, ֆինանսական շուկայում տեղի ունեցած էական փոփոխություններին արձագանքելու նպատակով Բանկը վերանայեց պետական արժեթղթերի պորտֆելի ծավալները և կառուցվածքը: 31.12.08թ.-ի դրությամբ Բանկի ներդրումներն արժեթղթերում (այդ թվում՝ հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր) կազմել են 4,479,483 հազ. ՀՀ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 15.1%-ը՝ նախորդ տարվա 27.5%-ի դիմաց:

Հաշվետու տարում, Բանկի կողմից պետական արժեթղթերի առաջնային շուկայում կատարված գործառնությունների ծավալը կազմել է 23,216,774 հազ. ՀՀ դրամ, իսկ երկրորդային շուկայում՝ 49,720,496 հազ. ՀՀ դրամ:

Արտարժույթային գործառնություններ

Հաշվետու տարում, Բանկի կողմից արտարժույթային գործառնությունների ծավալներն ըստ արտարժույթների կազմել են.

ԱՄՆ դոլարով գործարքների ծավալը՝ 530,043 հազ. ԱՄՆ դոլար,

ՌԴ ռուբլով գործարքների ծավալը՝ 1,000,458 հազ. ՌԴ ռուբլի,

Եվրո գործարքների ծավալը՝ 244,222 հազ. եվրո:

Վերը նշված արտարժույթային գործառնությունների արդյունքում, հաշվետու ֆինանսական տարում արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 351,975 հազ. ՀՀ դրամ՝ 2007 թվականի համեմատ աճելով 158,540 հազ. ՀՀ դրամով կամ 82%-ով: Արձանագրված աճը պայմանավորված է արտարժույթային գործառնությունների շուկայում Բանկի ճկուն քաղաքականությամբ, հաճախորդների շրջանակի էական ընդլայնմամբ, մի շարք խոշոր հաճախորդների, այդ թվում՝ նաև բանկային հաստատությունների, ներգրավմամբ:

Պարտավորություններ և Կապիտալ

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի պասիվների աճը (4,800,327 հազ. ՀՀ դրամով) պայմանավորված է ինչպես պարտավորությունների, այնպես էլ ընդհանուր կապիտալի աճով, որոնք կազմել են 1,720,681 հազ. և 3,079,646 հազ. ՀՀ դրամ համապատասխանաբար:

2006 թվականի համեմատ, Բանկի պարտավորություններն աճել են 18,838,542 հազ. ՀՀ դրամով, կամ 6.8 անգամ, իսկ կապիտալը՝ 3,650,782 հազ. ՀՀ դրամով, կամ 93.8%-ով:

2007 թվականի համեմատ, պարտավորությունների աճը պայմանավորված է նաև հաճախորդներից ներգրավված ժամկետային և ցպահանջ միջոցների աճով:

Հատկանշական է, որ 2008թ. ընթացքում աճի շարունակական միտում է ունեցել ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները, որոնց մնացորդներն աճել են 2,120,305 հազ. ՀՀ դրամով կամ 148.48%-ով՝ կազմելով 3,548,278 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու տարում, Բանկն իրականացրեց կորպորատիվ արժեկտրոնային պարտատոմսերի հերթական թողարկումը՝ 400,000 հազ. ՀՀ դրամ ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 18 ամիս նարման ժամկետով, արժեկտրոնի եռամսյակային վճարմամբ: Հարկ է նշել, որ, չնայած որ թողարկման ծավալը 60%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, պարտատոմսերի տեղաբաշխումն ընթացավ մեծ հաջողությամբ, պահանջարկը գերազանցեց թողարկման ծավալը շուրջ 75,000 հազ. ՀՀ դրամով:

Թողարկված կորպորատիվ պարտատոմսերը մինչ 2008 թվականի ավարտը ցուցակված էին «ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայի վերին՝ Abond մակարդակում: 2008 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում ֆոնդային բորսայում պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 111,672.2 հազ. ՀՀ դրամ:

Կապիտալ

Հաշվետու տարում Բանկի կապիտալի աճն ապահովվել է ինչպես ստացված զուտ շահույթի, այնպես էլ կանոնադրական կապիտալի աճի հաշվին:

Բանկը 2008 թվականի ավարտին, կանոնադրական կապիտալի համալրման նպատակով իրականացրեց 268,101 հատ լրացուցիչ բաժնետոմսերի թողարկում և փակ տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի 25%+1 բաժնետոմս բաժնեմասը տեղաբաշխեց նախօրոք հայտնի գնորդ՝ Ջարգացման և Վերակառուցման Եվրոպական բանկին (EBRD):

Բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման ծավալն անվանական արժեքով կազմել է 1,340,505 հազ. ՀՀ դրամ: Բացի անվանական արժեքով կանոնադրական կապիտալի աճից, Բանկն տեղաբաշխման արդյունքում ստացել է 697,330.7 հազ. դրամի էմիսիոն եկամուտ:

Լրացուցիչ բաժնետոմսերի թողարկման արդյունքում, Բանկի բաժնետերերի թիվը կազմում է 84, որից 80-ը՝ ֆիզիկական անձինք են, իսկ 4-ը՝ իրավաբանական անձինք:

2008 թվականի 2-րդ եռամսյակում ՀՀ ԿԲ-ի խորհրդի որոշմամբ Բանկի հասարակ անվանական բաժնետոմսերը ստացան առևտրի թույլտվություն և ընդգրկվեցին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ֆոնդային բորսայի ազատ շուկայում:

Բանկի կապիտալի աճի արդյունքում 1 բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը 31.12.08թ. դրությամբ կազմել է 7,035 դրամ՝ 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքի պարագայում:

Եկամուտներ և ծախսեր

Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, Բանկի տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 1,171,192 հազ. ՀՀ դրամով, կամ 126.1 %-ով՝ կազմելով 2,100,127 հազ. ՀՀ դրամ:

Բանկի տոկոսային եկամուտների գերակշռող մասը բաժին է ընկնում վարկային ներդրումներից ստացված եկամուտներին (1,679,956 հազ. ՀՀ դրամ կամ 79.99%) և արժեթղթերից ստացված եկամուտներին (306,011 հազ. ՀՀ դրամ կամ 14.57%):

Հաշվետու տարում, Բանկի եկամուտների կազմում կոմիսիոն և այլ վճարումներից զուտ եկամուտները կազմել են 179,611 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, աճել է 103,940 հազ. ՀՀ դրամով, կամ 137.36%-ով: Վերջինիս աճը պայմանավորված է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տեսականու և մասնաճյուղային ցանցի ընդլայնմամբ:

Արտարժութային գործառնություններից ստացված զուտ շահույթն աճել է 158,540 հազ. ՀՀ դրամով, կամ 81.96%:

Բանկի ոչ տոկոսային եկամուտների շարունակական ավելացման նպատակով, 2008 թվականին Բանկը սկսեց իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ՝ ներգրավելով նաև բանկի մասնաճյուղային ցանցը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում է նախորդ երեք տարիներն Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը Բանկի եկամուտների և ծախսերի կառուցվածքը:

հազ. ՀՀ դրամ	2006թ. ավարտված տարվա համար	2007թ. ավարտված տարվա համար	2008թ. ավարտված տարվա համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	379,176	928,935	2,100,127
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	34,206	374,559	713,908
Զուտ տոկոսային եկամուտ	344,970	554,376	1,386,219
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	45,194	134,095	282,940
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	16,757	58,424	103,329
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ	28,437	75,671	179,611
Արտարժութային գործառնություններից զուտ շահույթ/ (վնաս)	34,341	193,435	351,975
Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս)	874,721	210,630	17,191
Այլ եկամուտ	27,402	105,661	36,678
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	11,929	66,848	30,226
Անձնակազմի գծով ծախսեր	153,875	262,684	562,793
Հիմնական միջոցների մաշվածություն	35,918	76,528	122,089

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	5,777	6,152	7,795
Այլ ծախսեր	124,035	311,692	518,456
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	978,337	415,869	730,315

Հաշվետու տարում, Բանկի տոկոսային և նմանատիպ ծախսերը կազմել են 713,908 հազ. ՀՀ դրամ, որը նախորդ տարվա համեմատ, աճել է 339,349 հազ. ՀՀ դրամով: Ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում հաճախորդների հաշիվների դիմաց վճարված տոկոսային ծախսերին, որը կազմել է 383,261 հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու ֆինանսական տարում Բանկի անձնակազմի գծով ծախսերն աճել են 300,109 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 562,793 հազ. ՀՀ դրամ, հիմնական միջոցների մաշվածության ծախսերն աճել են 45,561 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 122,089 հազ. ՀՀ դրամ, ոչ նյութական ակտիվների մաշվածության ծախսերը՝ 1,643 հազ. ՀՀ դրամով՝ կազմելով 7,795 հազ. ՀՀ դրամ:

Բանկի ոչ տոկոսային ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ընդլայնման, նոր մասնաճյուղերի հիմնադրման և աշխատակիցների թվաքանակի համապատասխան ավելացման ծախսերի աճով:

Շահույթ, շահութաբերություն և շահաբաժիններ

Հաշվետու ֆինանսական տարվա արդյունքներով Բանկի զուտ շահույթը կազմել է 580,872 հազ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 248,354 հազ. ՀՀ դրամով կամ մոտ 75%-ով: Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները կազմել են՝

ROE (կապիտալի շահութաբերություն)՝ 11.93%,

ROA (ակտիվների շահութաբերություն)՝ 2.07%:

Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) նախորդ տարվա համեմատ աճել է 67.8%-ով և կազմել է 727.9 ՀՀ դրամ:

Նախորդ տարիների ընթացքում Բանկը շահաբաժիններ չի վճարել և ստացված շահույթն ամբողջությամբ ուղղվել է Բանկի կապիտալիզացիային:

Ռիսկերի կառավարում

Բանկի բնականոն գարգացման և ինստիտուցիոնալ ամրապնդման առումով կարևորվում է ռիսկերի կառավարման գործուն համակարգի մշակումն ու ներդրումը: Այն հատկապես արդիական և առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում ներկայիս համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում:

Նպատակ ունենալով ամբողջականացնել և զարգացնել Բանկում առկա ռիսկերի կառավարման գործընթացները, հաշվետու ժամանակաշրջանում Բանկում ստեղծվեց Ռիսկերի կառավարման առանձնեցված ստորաբաժանում: Բանկում տարանջատված են ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման գործընթացները՝ ռիսկերի տեսակների ըստ ստորև նշված խմբավորմամբ.

- վարկային,
- իրացվելիության,
- գործառնական:

Ստորև շարադրված են Բանկում կիրառվող ռիսկերի կառավարման գործիքների նկարագրությունները:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկի կառավարման համար Բանկում ներդրվել է վարկային ռիսկի բացահայտման և գնահատման մեթոդաբանություն, որը հնարավորություն է տալիս բացահայտել և գնահատել վարկի ռիսկայնությունը: Վարկային ռիսկի գնահատման և դրա հիման վրա որոշումներ կայացնելու նպատակով կիրառվում են 3 տարբեր գործիքներ. պոտենցիալ վարկառուի սնանկության հավանականության մոդելը, պոտենցիալ վարկառուի բալավորման մոդելը, ինչպես նաև կորպորատիվ հաճախորդի կառավարման որակի գնահատման մոդելը: Հիմնվելով նշված գործիքների արդյունքների, ինչպես նաև ներքին ակտերով սահմանված նորմատիվների վրա Ռիսկերի կառավարման համապատասխան ստորաբաժանման կողմից կազմվում է Վարկային Ռիսկի եզրակացություն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկի կառավարման ժամանակ Բանկի կողմից բացահայտվում և գնահատվում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ռիսկերը՝ կառավարման համար համապատասխան առանձնահատկություններով:

Ռիսկի հնարավորինս նվազեցման նպատակով, ընդհանուր իրացվելիության ռիսկը կառավարելիս կանխատեսվում են ներգրավվող և տեղաբաշխվող միջոցներն ըստ ժամկետայնության, ծավալների և կենտրոնացման աստիճանի:

Ընթացիկ ռիսկի կառավարման գործընթացը հիմնված է փաստացի և կանխատեսվող համապատասխան ցուցանիշների օրական շարժի տվյալների վրա՝ հիմք ընդունելով հետևյալ չափանիշները.

1. բանկի վճարահաշվարկային օրական պարտավորությունները;
2. դրամական հոսքերի օրական շարժը;
3. վարկերի, ավանդների, արժեթղթերի հետ կապված գործառնությունների օրական շարժը:

Իրացվելիության ռիսկի կառավարումը Բանկի ներքին ակտերով վերապահված է Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովին (ԱՊԿՅ):

Բանկում ստեղծվել է նաև իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման համար համակարգ, որը գործառնական օրվա ցանկացած պահին հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության արտաքին՝ ՀՀ ԿԲ-ի կողմից, և ներքին՝ Բանկի ներքին իրավական ակտերով, ինչպես նաև պայմանագրային պարտավորություններով սահմանված նորմատիվների, սահմանափակումների, գործակիցների պահպանման վիճակը:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման համար հիմք են հանդիսանում ինչպես երկրի իրական հատվածի, այնպես էլ մրցակիցների կողմից ներկայացվող առաջարկի/ պահանջարկի միտումների վերաբերյալ կատարվող մշտական վերլուծությունները: Մշակվել է տոկոսադրույքների փոփոխման ռիսկի գնահատման մեթոդաբանություն, որը հիմնված է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պասիվների դիսբալանսի վերլուծության և կառավարման վրա:

Արտարժույթային ռիսկ

Այս ռիսկի կառավարման համար կարևոր նշանակություն ունի արտարժույթային դիրքի կառավարումը, դրանից բխող հեջավորման գործիքների կիրառումը: Արտարժույթային ռիսկի հնարավորինս նվազեցման նպատակով մշակվել է արտարժույթային ռիսկի գնահատման մեթոդիկա: Բանկը ձգտում է վարել արդյունավետ արտարժույթային քաղաքականություն՝ զուգակցելով արտարժույթային դիրքի կառավարումը արդարացված ռիսկի մակարդակի հետ:

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկի կառավարումն առավել մեծ կարևորություն ունի Բանկի համար և այս ռիսկը դիտվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ, որոնք պայմանավորված են Բանկի անձնակազմի ոչ համարժեք հմտության կամ սխալ գործողություններով, ընթացիկ աշխատանքի կազմակերպման և կատարման թերություններով, սարքավորումների տեխնիկական անսարքությամբ, ընթացակարգերի անկատարությամբ, ինչպես նաև արտաքին ծառայությունների թերացմամբ:

2008 թվականին Բանկում ներդրվել է գործառնական ռիսկի գնահատման և կառավարման մոդել, որի օժանդակությամբ արդեն գործում է գործառնական ռիսկերի տվյալների տեղեկատվական բազա: Բանկի բոլոր ստորաբաժանումների կողմից հաշվառվում և գրանցվում են գործառնական ռիսկի դեպքերը, որոնց վերաբերյալ պարբերաբար ներկայացվում են հաշվետվություններ:

Ներքին հսկողության համակարգ

Բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության գործուն և արդյունավետ համակարգի շարունակական զարգացման գործընթացին, ապահովելով՝

- Բանկի գործունեության, այդ թվում՝ մատուցվող ծառայությունների, կատարվող գործառնությունների կանոնակարգումը.
- Բանկի գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական ակտերի, ինչպես նաև Բանկում գործող ներքին իրավական ակտերի պահանջներին.
- Բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտումը, գնահատումն ու շարունակական կառավարումը.
- Ֆինանսական և այլ հաշվետվությունների արժանահավատությունն ու անբողջականությունը:

Բանկի ներքին հսկողության պատշաճ ապահովման կարևոր գրավականներից է ներքին վերահսկողության համակարգի արդյունավետ գործունեությունը, որի նպատակներից է ներքին աուդիտի դերի բարձրացումը Բանկի ներքին հսկողության համակարգի պարբերական և անկախ գնահատման գործուն:

Այդ իսկ նպատակով հաշվետու տարում Բանկի ներքին աուդիտի կազմը համալրվել է բարձրակարգ մասնագետներով, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտով զբաղվող մասնագետով:

Անհրաժեշտ է նշել, որ հաշվետու տարում ներքին աուդիտի կողմից Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվել են 15 համալիր և 65 նպատակային ստուգումներ, ինչպես նաև երեք տասնյակից ավել գույքագրումներ և առանձին ոլորտների ուսումնասիրություններ, հետևյալ հիմնական ուղղություններով.

- Գործող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին Բանկի գործունեության համապատասխանության գնահատում,
- Բանկում ներքին հսկողության համակարգի և ռիսկերի կառավարման արդյունավետության գնահատում,
- Հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և անբողջականության գնահատում,
- Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունների ըստ ոլորտների ստուգում,
- Կատարված գործարքների, դրանց հաշվապահական ձևակերպումների և փաստաթղթերի համապատասխանության ստուգում,
- Բանկի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի նկատմամբ հսկողություն,
- «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, նշված օրենքի հիման վրա ընդունված իրավական և Բանկի ներքին ակտերի պահանջների կատարման հսկողություն:

Բացի այդ, Ներքին աուդիտի կողմից իրականացվում է իրական ժամանակի

ռեժիմում (on-line) Բանկի ընթացիկ գործունեության նկատմամբ ամենօրյա հսկողություն:

Նշված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը, Ներքին աուդիտի կողմից ներկայացրած առաջարկությունները, ինչպես նաև Բանկի համապատասխան կառավարման մարմինների կողմից քննարկումն ու որոշումների ընդունումը նպատակաուղղվել են բացահայտված թերությունների վերացմանը, ռիսկերի կանոնակարգմանը, կանխարգելիչ միջոցառումների մշակմանը և այդ ամենի արդյունքում Բանկի գործունեության ընդհանուր ռիսկայնության նվազեցմանն ու արդյունավետ հսկողության ապահովմանը:

Ծառայություններ և հաճախորդներ

Բանկը հաշվետու տարում ընդլայնել է հաճախորդներին միջազգային չափանիշներին համապատասխանող և մրցունակ վճարահաշվարկային ծառայությունների մատուցման ծավալները: Ծառայությունների տեսականու շարունակական ընդլայնումը նպատակ ունի ոչ միայն բավարարել առկա պահանջարկը, այլ նաև հանդես գալ նոր առաջարկով և բավարարել հաճախորդների պահանջումները: Բանկի վճարահաշվարկային գործառնությունների ծավալների աճի մասին է վկայում 2008 թվականին նախորդ տարվա համեմատ կոմիսիոն և այլ եկամուտների տեսքով ստացված զուտ եկամուտների 109 %-ով աճը:

Բանկի առաջարկվող ծառայությունների շարունակական կատարելագործման գործընթացը մշտապես գտնվում են Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ծառայությունների սպասարկման որակի հաճախակի դիտարկումները, հաճախորդների շրջանում կազմակերպվող հարցումները հնարավորություններ են տալիս արագ արձագանքել և իրականացնել մատուցվող ծառայությունների ձևափոխման կամ բարելավման միջոցառումներ, որը դրական ազդեցություն է թողնում սպասարկման որակի բարձրացման, նոր հաճախորդների ներգրավման և Բանկի եկամուտների ավելացման վրա:

Հաշվետու տարում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ գործարկեց “ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ” առևտրատեղեկատվական բազմաֆունկցիոնալ համակարգը, որը նորույթ է ՀՀ ֆինանսական շուկայում և հնարավորություն է տալիս հաճախորդներին՝

- Բանկի հաշիվներում առկա մնացորդների սահմանների չափով իրականացնել արտարժույթի առք ու վաճառքի գործարքներ,
- դիտել Բանկի կողմից սահմանված փոխարկային փոխարժեքները on-line ռեժիմով,
- դիտել հաշիվներում առկա դրամական մնացորդները,
- դիտել իրականացված գործարքների պատմությունը,
- դիտել ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի Բանկի կողմից սահմանված առք ու վաճառքի փոխարժեքները,
- դիտել ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի Բանկի կողմից սահմանված առք ու վաճառքի փոխարժեքները գծային պատկերի տեսքով,
- արտահանել ցանկացած դիտվող տեղեկություն Excel ձևաչափով,
- հետևել տեղական և միջազգային ֆինանսական նորություններին,
- հաղորդակցվել էլեկտրոնային փոստի միջոցով:

Հաշվի առնելով Բանկի մասնաճյուղային ցանկի շարունակական ընդլայնումը, կարևոր խնդիր է հանդիսանում ազգաբնակչության կողմից կատարվող բազմաբնույթ կոմունալ վճարումների և հեռախոսավարձերի ընդունման ոլորտում Բանկի ընդգրկվածության աստիճանը: Հաշվետու տարում, նախորդ տարվա համեմատ, աճը կազմել է 2.15 անգամ՝ կազմելով 741,850.8 հազ. դրամ:

Միաժամանակ Բանկի ղեկավարությունն իր մշտական ուշադրության ներքո է պահում նաև հաճախորդների սպասարկման համար պատասխանատու աշխատակիցների գործունեությունը, որոնց աշխատանքի որակը ուղղակի հարաբերակցության մեջ է հաճախորդների թվի աճի հետ: Այդ իսկ պատճառով և

Ուսումնասիրելով հաճախորդների սպասարկումը հասցնել որակապես նոր մակարդակի, Բանկում որոշում էր կայացվել ներդնել հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման (CRM) համակարգը:

Բանկի մանրածախ ֆինանսական ծառայությունների զարգացման ոլորտում կարևոր ուղղություն է դիտարկվում միջազգային արագ դրամական փոխանցումների տեսականու բազմազանացումը և ծավալային աճի ապահովումը: Ի հավելումն Բանկում գործող 6 միջազգային դրամական փոխանցումների համակարգերին, որոնք են Անելիք, Migom, БТФ-связь, PrivatMoney, Blizko և Быстрая почта համակարգերը, 2008 թվականին Բանկը միացել է Avers և Xpress Money միջազգային դրամական փոխանցումների համակարգերին: Արդյունքում միջազգային փոխանցումների ծավալը նախորդ տարվա համեմատ աճեց շուրջ 72%-ով, չնայած այն հանգամանքին, որ հաշվետու տարվա ընթացքում ՀՀ-ում դադարեցվեց այս ոլորտում խոշորագույն օպերատոր հանդիսացող «Western Union» կազմակերպության գործունեությունը:

Ծառայությունների բազմազանման և սպասարկման որակի բարելավման արդյունքում, զգալիորեն ընդլայնվեց հաճախորդների շրջանակը: 2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 26,025, որը 2007 թ. դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 16,757-ով կամ 1.8 անգամ: Հարկ է նշել, որ իրավաբանական անձանց շրջանում ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում հաշիվների հեռակառավարման «Բանկ-Հաճախորդ» համակարգը, որից օգտվում են մոտ 70 հաճախորդներ: Բանկի ակտիվ հաճախորդների կազմը և կառուցվածքն արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

Բանկի հաճախորդներ	Հաճախորդների քանակը			Հաշվարկային/ ընթացիկ, անձնական հաշիվների քանակը			Ավանդային հաշիվների քանակը		
	01.01.08	01.01.09	(+/-)	01.01.08	01.01.09	(+/-)	01.01.08	01.01.09	(+/-)
Իրավաբանական անձինք	380	954	574	979	2,476	1,497	40	30	-10
Ֆիզիկական անձինք	8,888	25,071	16,183	9,745	24,334	14,589	411	911	500
Ընդամենը	9,268	26,025	16,757	10,724	26,810	16,086	451	941	490

Հաշվետու տարվա ավարտին Բանկի հաճախորդների 3.7%-ն իրավաբանական, իսկ 96.3%-ը ֆիզիկական անձինք են: Ընդ որում, ֆիզիկական անձ-հաճախորդների աճի տեմպը գերազանցում է իրավաբանական անձ-հաճախորդների աճի տեմպին:

Հաշվետու ֆինանսական տարում հաճախորդների հաշվարկային/ընթացիկ, անձնական հաշիվների քանակն աճել է 1.5 անգամ, իսկ ավանդային հաշիվների քանակն աճել է 8.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց ավանդային հաշիվները նվազել են 10-ով, իսկ ֆիզիկական անձանց ավանդային հաշիվներն աճել են 1.2 անգամ:

Վճարահաշվարկային գործառնություններ

Չեկեր

Հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում Բանկը շարունակել է իրականացնել չեկերի տրամադրման և սպասարկման գործառնությունները: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկն ակտիվ համագործակցել է American Express և Mashreqbank ընկերությունների հետ և տրամադրել է 838 հատ չեկ:

Ակրեդիտիվներ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը թողարկել է 1,653,132 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով ակրեդիտիվ, որից 990,188 ԱՄՆ դոլար տրամադրվեց EBRD-ի հետ իրականացվող առևտրի խթանման ծրագրի շրջանակներում:

Միջազգային դրամական փոխանցումներ

Հաշվետու ֆինանսական տարում միջազգային դրամական փոխանցումների համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 44,678,546 ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 15,890,556 ԱՄՆ դոլարի դիմաց:

Հաշվետու ֆինանսական տարում SWIFT համակարգով փոխանցումների ծավալը կազմել է 519,838,875 ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 226,020,188 ԱՄՆ դոլարի դիմաց:

Պլաստիկ քարտեր

Պլաստիկ քարտերի թողարկման և սպասարկման ոլորտը Բանկի համար շարունակում է մնալ զարգացման հեռանկարային ուղղություն, որի համար ներդրվում են տեխնիկատեխնոլոգիական նորամուծություններ՝ հաշվի առնելով ներկա պայմաններում հաճախորդների աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացման մեծ ներուժը:

2008 թվականի երկրորդ եռամսյակում Բանկն սկսեց թողարկել և տրամադրել MasterCard միջազգային պլաստիկ քարտեր: Բանկը հաճախորդներին առաջարկել է MC Cirrus/Maestro, MC Standard, MC Gold, MC BUSINESS քարտեր, որոնց նպատակային շուկանները ու պայմանները տարբեր են:

2006թ.-ից հանդիսանալով «Արմենիան քարդ» ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ՝ Բանկը թողարկում է ArCa Classic, ArCa Junior, ArCa Cobranded (Green Line) ArCa Business, ինչպես նաև AUTOCARD բանկային վճարային քարտեր: Ի հավելումն թողարկվող քարտերի, 2008 թվականին Բանկը մշակեց նոր քարտային առաջարկ՝ ArCa Ընտանեկան քարտ:

Հաշվետու տարում Բանկը թողարկել է 11,634 հատ ArCa վճարային քարտ, իսկ տարեվերջին քարտերի քանակը կազմել է 21.343 հատ, կամ շուկայում թողարկված տեղական քարտերի 10.1%-ը:

Պլաստիկ քարտերով գործառնությունների զարգացման համար Բանկն ընդլայնել է կանխիկացման և առևտրի սպասարկման կետերի թիվը, մշտապես հանդես է գալիս

մի շարք նոր քարտային պրոդուկտների առաջարկով:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ Բանկի սպասարկման ցանցը ներառում է 94 առևտրի և սպասարկման կետեր, ինչպես նաև 22 բանկոմատներ: Բանկոմատների միջոցով իրականացված կանխիկացման գործարքների քանակը կազմել է 210,671, իսկ կանխիկացման գործարքների գումարը՝ շուրջ 6,912,269 հազ. ՀՀ դրամ:

Կադրային քաղաքականություն

Բանկում կարևորվում է բարձր որակավորում ունեցող աշխատակազմի դերը ծրագրավորված ցուցանիշների ապահովման գործում: Իրագործվող կադրային քաղաքականությունը նպատակ է հետապնդում Բանկում կադրերի կառավարման որակը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, ինչպես նաև պայմաններ ստեղծել անձնակազմի պատասխանատու և ստեղծագործական աշխատանքի համար:

Միաժամանակ Բանկում պարբերաբար իրականացվում է աշխատակիցների ատեստավորում՝ ելնելով աշխատակիցների զբաղեցրած պաշտոնի համապատասխանելիության ապահովման և պաշտոնավարման առաջխաղացման անհրաժեշտությունից, որը ենթադրում է Բանկի աշխատակիցների մասնագիտական ունակությունների և ընդհանուր գիտելիքների ստուգման գործընթաց: Ատեստավորման արդյունքների հիման վրա ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր աշխատակիցների մասնագիտական ունակությունների կատարելագործման, ինչպես նաև անհրաժեշտ վերապատրաստումների ապահովման ուղղությամբ:

Կարևորելով Բանկի աշխատակիցների հմտությունների և մասնագիտական ունակությունների շարունակական զարգացման և կատարելագործման հանգամանքը, հաշվետու տարվա ընթացքում Բանկը կազմակերպեց մի շարք վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ վարկավորման գործընթացի իրականացման համար պատասխանատու մասնագետների համար:

Միաժամանակ տարվա ընթացքում կազմակերպվեցին նաև մասնագիտական դասընթացներ մասնաճյուղի կառավարիչների և կառավարիչների տեղակալների ներգրավման նպատակով:

Հաշվետու տարում Բանկում ներդրվել է վարկավորման մասնագետների վարձատրության բոնուսային համակարգ, որի կիրառման արդյունքում ուղղակիորեն կապակցվել են տրամադրված վարկերի ծավալները և հետագա սպասարկման որակը վարկային մասնագետների վարձատրության չափի հետ:

Միաժամանակ Բանկում մշակվել և ներդրվել է մասնաճյուղերի գործունեության գնահատման և աշխատակիցների վարձատրության համակարգ, որով աշխատակիցների վարձատրության չափը կախվածության մեջ է դրվել մասնաճյուղի եռամսյակային գործունեության արդյունքներից:

Բանկում աշխատում են 283 աշխատող, որոնցից 204-ն ունեն բարձրագույն կրթություն:

Տարածքային գործունեություն

Հաշվետու տարում ևս Բանկի տարածքային քաղաքականությունն ուղղված էր մասնաճյուղային ցանցի ընդլայնմանը ՀՀ տարածքում, ներառելով զարգացման ներուժ և բանկային ծառայությունների պահանջարկ ունեցող տարածաշրջաններ: Ակտիվ տարածքային քաղաքականության արդյունքում ստեղծվեցին թվով 11 նոր մասնաճյուղեր ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ-ի շրջաններում:

Հեռանկարային զարգացման առումով այն կրելու է շարունակական բնույթ և պահպանելու է աճի միտումը:

Նոր մասնաճյուղերի ստեղծման որոշումը հիմնավորվում է ինչպես տվյալ տարածքում գործող ֆինանսական ծառայություններ մատուցող մրցակից բանկերի բացակայությամբ, այնպես էլ գործող, բայց ոչ մրցակցային նշանակություն ունեցող մրցակիցների գործունեությամբ:

Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	2007 թվ.	2008 թվ.
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	332,518	580,872
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,099,164	4,868,765
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	8.11%	11.93%
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	332,518	580,872
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	14,777,469	28,056,652
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	2.25%	2.07%
Ջուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	332,518	580,872
Գործառնական եկամուտ	1,572,756	2,788,911
Ջուտ շահույթի մարժա (NPM), %	21.1%	20.8%
Գործառնական եկամուտ	1,572,756	2,788,911
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	14,777,469	28,056,652
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	10.6%	9.9%
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	14,777,469	28,056,652
Սեփական կապիտալի միջին մեծություն	4,099,164	4,868,765
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	3.60	5.76
Ջուտ տոկոսային եկամուտ	554,376	1,386,219
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	9,670,124	18,320,722
Ջուտ տոկոսային մարժա (NIM)	5.73%	7.57%
Տոկոսային եկամուտ	928,935	2,100,127
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	9,670,124	18,320,722
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	9.61%	11.46%
Տոկոսային ծախսեր	374,559	713,908

Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	5,043,713	9,132,883
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	7.43%	7.82%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	332,518	580,872
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը, հազ. հատ	692	798
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	481	728
Սպրեդ	2.18%	3.64%

Բանկի հետագա զարգացման նկարագիրը

Հեռանկարային զարգացման խնդիրները պայմանավորված են Բանկի առջև դրված նպատակներով և դիտարկվում են հետևյալ ցուցանիշների աճի մակարդակներով.

- Բանկի ընդհանուր ակտիվների մնացորդների կտրուկ աճ, հիմնականում եկամտաբեր ակտիվների հաշվին, որոնց գերակշռող մասը կազմելու են վարկային ներդրումները,

- Պասիվների մնացորդների աճի պայմաններում ներգրավվող միջոցներից ժամկետային ավանդների մնացորդների, ցպահանջ ավանդների մնացորդների, ինչպես նաև ընդհանուր կապիտալի աճ,

- միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների հետ համագործակցության մակարդակի աճը ենթադրում է միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների շարունակական աճ,

- վարկավորման համակարգի հետագա զարգացում՝ նպատակ ունենալով բարձրացնել մասնաճյուղերի ներգրավվածության մակարդակը,

- Բանկի միջնորդական ծառայությունների ընդլայնման, սպասարկման որակի բարձրացման արդյունքում նախատեսվում է ստացվելիք կոմիսիոն գումարների աճ,

- վճարահաշվարկային ծառայությունների, այդ թվում՝ պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալման նպատակով նախատեսվում է ATM-երի թվի աճ և տեղաբաշխվածության ընդլայնում,

- եկամտաբեր ակտիվների ծավալների աճի հաշվին տոկոսային եկամուտների աճ,

- Բանկի կողմից միջնորդական և վճարահաշվարկային ծառայությունների աճի հաշվին ոչ տոկոսային եկամուտների աճ,

- վերը բերված ցուցանիշների աճի դեպքում կարձանագրվի նաև զուտ շահույթի աճ:

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական
Ընկերություն

31 դեկտեմբերի 2008թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	1
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	3
Հաշվապահական հաշվեկշիռ	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964

Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC

8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T +374 10 260 964

F +374 10 260 961

www.gta.am

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի բաժնետերերին և Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի^ա (այսուհետև՝ Բանկ) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարա՛իրը և այլ պարզաբանող ծանոթարություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Բանկի տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազ ային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակար ի մշակումը կիրառումը և պահպանումը հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը ինչպես նաև տվյալ հան ամանքներում ողջամիտ հաշվապահական նահատումների կատարումը

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Բանկի ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Տնօրեն/բաժնետեր
Ա. Փինարբասի

06 փետրվարի, 2009թ.
ք. Երևան



Աուդիտոր
Ա. Աղաջանյան



Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2008 ղեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)	2007 ղեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	2,100,127	928,935
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(713,908)	(374,559)
Զուտ տոկոսային եկամուտներ		1,386,219	554,376
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	282,940	134,095
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(103,329)	(58,424)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		179,611	75,671
Արտարժույթային գործարքներից զուտ շահույթ		351,975	193,435
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտ		17,191	210,630
Այլ եկամուտներ	8	36,678	105,661
Վարկային կորուստների արժեզրկման ծախս	9	(30,226)	(66,848)
Անձնակազմի գծով ծախսեր	10	(562,793)	(262,684)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(122,089)	(76,528)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19	(7,795)	(6,152)
Այլ ծախսեր	11	(518,456)	(311,692)
Շահույթ մինչև հարկում		730,315	415,869
Շահութահարկի գծով ծախս	12	(149,443)	(83,351)
Տարվա շահույթ		580,872	332,518
Մեկ բաժնետոմսին ընկնող շահույթ			
Բազային	13	0.7	0.5

ից էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը

Հաշվապահական հաշվեկշիռ

Հազար ՀՀ դրամ		2008 թվ. 31-ի դրությամբ (ստուգված)	2007 թվ. 31-ի դրությամբ (ստուգված)
	Ծանոթ.		
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	10,524,093	4,492,183
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	974,768	2,813,380
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	16	12,164,364	9,634,955
Վաճառքի համար նատչելի ներդրումներ	17	2,996,407	6,845,945
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	26	1,591,742	
Հիմնական միջոցներ	18	1,181,602	517,777
Ոչ նյութական ակտիվներ	19	53,747	44,832
Հետաձգված հարկային ակտիվ	12	4,992	-
Վաճառքի համար պահվող ակտիվներ	20	46,505	302,885
Այլ ակտիվներ	21	94,047	179,983
		29,632,267	24,831,940
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	4,859,672	2,097,351
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	16,601,573	17,453,926
Թողարկված պարտքային արժեթղթեր	24	400,789	252,739
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		112,348	44,838
Հետաձգված հարկային պարտավորություն	12	-	170
Այլ պարտավորություններ	25	113,283	517,960
		22,087,665	20,366,984
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	27	5,362,005	3,640,000
Էմիսիոն եկամուտ		766,001	-
Գլխավոր պահուստ		270,000	250,000
Այլ պահուստներ		25,732	14,964
Զբաղիված շահույթ		1,120,864	559,992
		7,544,602	4,464,956
		29,632,267	24,831,940

Ֆինանսական հաշվետվությունները, ներկայացված 3-ից 57 էջերում ստորագրվել են Բանկի Վարչության նախագահի և Գլխավոր հաշվապահի կողմից 2009թ. փետրվարի 6-ին:

8-ից 57 էջերում ներկայացված ծանոթաբությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ա. Օսիպյան
Վարչության նախագահ




Գ. Մարգարյան
Գլխավոր հաշվապահ



Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար նատչելի ներդրում- ների գծով վերագնա հատման պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 01.01.2007թ. դրությամբ (վերաներկայացված)	3,240,000	-	133,500	3,456	172,890	343,974	3,893,820
Հիմնական միջոցների վերադասակարգումից պահուստի ճշգրտում	-	-	-	-	(212,578)	-	(212,578)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	176,223	-	-	176,223
Վաճառքի համար նատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(164,715)	-	-	(164,715)
Հետաձգված հարկի ազդեցությունը	-	-	-	-	39,688	-	39,688
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված ընդհանուր եկամուտներ և ծախսեր	-	-	-	11,508	(172,890)	-	(161,382)
Տարվա շահույթ	-	-	-	-	-	332,518	332,518
Ընդամենը տարվա եկամուտներ և ծախսեր	-	-	-	11,508	(172,890)	332,518	171,136
Բաժնետիրական կապիտալի ավելացում	400,000	-	-	-	-	-	400,000
Հատկացում պահուստին	-	-	116,500	-	-	(116,500)	-
Հաշվեկշիռը 31.12.07թ. դրությամբ (ստուգված)	3,640,000	-	250,000	14,964	-	559,992	4,464,956
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	186,925	-	-	186,925
Վաճառքի համար նատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ օգուտ	-	-	-	(176,157)	-	-	(176,157)

Կապիտալում ուղղակիորեն ճանաչված ընդհանուր եկամուտներ և ծախսեր	-	-	-	10,768	-	-	10,768
Տարվա շահույթ	-	-	-	-	-	580,872	580,872
Ընդամենը տարվա եկամուտներ և ծախսեր	-	-	-	10,768	-	580,872	591,640
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,722,005	-	-	-	-	-	1,722,005
Էմիսիոն եկամուտ	-	766,001	-	-	-	-	766,001
Հատկացում պահուստին	-	-	20,000	-	-	(20,000)	-
Հաշվեկշիռը 31.12.08թ. դրությամբ (ստուգված)	5,362,005	766,001	270,000	25,732	-	1,120,864	7,544,602

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	31.12.08-ին ավարտված տարվա համար (ստուգված)	31.12.07-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված տոկոսներ	2,084,536	770,459
Վճարված տոկոսներ	(742,289)	(263,988)
Ստացված կոմիսիոն վճարներ	282,940	47,138
Վճարված կոմիսիոն գումարներ	(103,329)	(41,339)
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից օգուտ	17,191	187,771
Արտարժույթային գործառնականություններից իրացված շահույթ	351,975	193,435
Այլ ստացված եկամուտներ	35,874	288,412
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ	7,637	782
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(478,128)	(256,067)
Վճարված այլ գործառնական ծախսեր	(565,871)	(534,815)
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	890,536	391,788
<i>(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>		
Դեպոզիտներ միջոցներ ՀՀ ԿԲ-ում	(150,279)	(78,899)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,144,027	(1,415,795)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	(2,530,894)	(7,062,973)
Այլ ակտիվներ	319,241	(66,863)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	1,253,640	1,022,842
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(1,269,921)	8,193,170
Այլ պարտավորություններ	(391,550)	6,162,632
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	264,800	7,145,902
Վճարված շահութահարկ	(87,095)	(37,404)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	177,705	7,108,498
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք և իրացում	2,243,694	(5,551,120)
Հիմնական միջոցների առք	(784,962)	(370,050)
Հիմնական միջոցների վաճառք	1,096	-
Ոչ նյութական ակտիվների առք	(16,710)	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	1,443,118	(5,921,170)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի թողարկում	2,488,006	400,000
Պարտքային արժեթղթերի թողարկում	400,000	-
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում	1,518,403	1,351,991
Այլ երկարաժամկետ վարկեր	300,000	-
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	4,706,409	1,751,991
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	6,327,232	2,939,319
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,860,663	1,917,570
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(148,509)	3,774
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 14)	11,039,386	4,860,663